

**Ռուբինա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԲԱՑԱՌԱԿԱՆ, ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՅՈՒՄ**

Բացառական, գործիական, ներգոյական հոլովներից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն, սեփական ձևը, որը կարող է նպաստել նշված հոլովների յուրացմանը: Նրանց ուսուցումը կազմակերպվում է երեք փուլով՝ 1. հոլովի ձևի ուսուցում, 2. հոլովի իմաստի ուսուցում, 3. հոլովի շարահյուսական կիրառության ուսուցում:

Նշված հոլովների ձևի ուսուցման հիմքում ընկած է յուրաքանչյուր հոլովաձևի կազմության առանձնահատկությունների վերհանումը, ինչը արտահայտվում է որոշակի վերջավորությունների միջոցով: Կրտսեր դպրոցից աշակերտները գիտեն, որ բացառական հոլովը կազմվում է *ից, ուց* վերջավորություններով, որոշակի վերջավորություն ունի նաև գործիական հոլովը՝ *ով, ք*, ներգոյական հոլովը ձևավորվում է *ում* հոլովակազմիչով: Քանի որ այս հոլովներն ունեն կայուն վերջավորություններ, ապա դրանցից յուրաքանչյուրի ձևի ուսուցման ժամանակ կարելի է հաշվի առնել վերջավորությունը: Կրտսեր դպրոցից աշակերտները գիտեն բացառական հոլովի անջատման իմաստը և խոսքի մեջ նրա՝ անուղակի խնդրի շարահյուսական դերը (Ծառից պոկվեց տերևը:), գործիական հոլովի միջոցի իմաստն ու նրա՝ անուղակի խնդրի շարահյուսական դերը (Փայտահատը սողոցով կտրում է ծառը:) և ներգոյական հոլովի գործողության տեղի իմաստը (Հայկը սովորում է վարժարանում:): Միջին դպրոցում ուսուցման խնդիրն է աշակերտներին հմտացնել այս հոլովների ճանաչման մեջ, ծանոթացնել նշված հոլովների գլխավոր և երկրորդական իմաստային հարաբերություններին ու շարահյուսական կիրառություններին: Յուրաքանչյուր հոլովի հիմնական և երկրորդային իմաստները դիտարկվում են նախադասությունների մեջ:

1. *Բացառական հոլովի* ուսուցման ընթացքում աշակերտներին պետք է բացատրել, որ նրա հիմնական՝ անջատման իմաստից են բխում մասնավոր մյուս իմաստներն ու դրանցով պայմանավորված շարահյուսական կիրառությունները. այսպես՝ բացառականով արտահայտած պատճառի պարագան դիտվում է որպես մի բան առաջ բերող հանգամանք (Նա հուզմունքից շփոթվել էր:), տեղի պարագան իբրև ելման կետ (Գնացքը դուրս ելավ կայարանից:), ժամանակի պարագան՝ որպես ելման ժամանակակետ (Արամը գնացքին սպասում էր առավոտյան ժամը իննից:): Իհարկե, բացառական հոլովն արտահայտում է բազմաթիվ իմաստներ<sup>1</sup>, որոնք բոլորն էլ կարևոր են ու կիրառելի, սակայն միջին դպրոցում ուշադրությունը կենտրոնացվում է բացառականի արտահայտած հիմնական, խոսքում առավել հաճախադեպ կիրառություններին: Այստեղ հաշվի են առնվում նաև աշակերտների տարիքային առանձնահատկությունը, ընկալման հնարավորությունները, ինչպես նաև՝ դպրոցական ծրագրային նյութը:

Բացառական հոլովի ծագման, տեղի, ժամանակի, պատճառի իմաստներն ուսուցանելու համար աշակերտները դիտարկվում են հետևյալ նախադասությունները՝

Ծագում է մանուկ արևը զարնան  
Կովկաս լեռների ձյունի պատնեշից:  
(ծագման իմաստ)

Լեռներից, դաշտից, անտառի խորքից  
Հողը, իմ հողը կանչում է, կանչում:  
(տեղի իմաստ)

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես,  
Միրող քո մոր խոսքը սրտանց,  
Այսօրվանից հանձնում եմ քեզ  
Հայոց լեզուն հազարագանձ:  
(ժամանակի իմաստ)  
Խեղճը դողալով՝  
Դարդից կռացավ,  
(պատճառի իմաստ)

<sup>1</sup> *Բացառական հոլովի արտահայտած իմաստների մասին մանրամասն տես՝ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, էջ 126-148:*

Աշակերտները, *ից* և *ուց* հոլովակազմիչ վերջավորություններով կողմնորոշվելով, գտնում են բացառական հոլովով դրված անդամները: Այս գոյականներով բանավոր կազմում են նախադասություններ: Այսպես աշակերտները եզրահանգում են անում, ձևակերպում բացառական հոլովի բնորոշումը:

Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից բխում, ծագում կան սերվում է գործողությունը: Բացառական հոլովը պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, երբվանի՞ց հարցերին: Բացառական հոլովը կազմվում է *ից*, *ուց* վերջավորություններով և սովորաբար գործածվում է անորոշ առումով: Բացառական հոլովի այս ընդհանուր բնորոշումից հետո ուսուցիչն աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է բացառական հոլովի կազմության վրա: Աշակերտները բացառական հոլովով դրված բառերը բաժանում են բաղադրիչների (լեռ-ներ-ից, երկնք-ից, խորք-եր-ից և այլն), որոշում վերջավորությունը, այնուհետև թվում տարբեր գոյականներ *ից*, *ուց* վերջավորություններով: Համանման սխալները կանխելու նպատակով ուսուցիչն աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է բացառական հոլովի կազմության հետևյալ օրինաչափությունների վրա.

ա) Ի հոլովման գոյականների բացառականը կազմվում է ուղղական հոլովի ձևից, ինչպես՝ բանվոր-բանվորից, թուփ-թփից: Ու ձայնավորով վերջացող միավանկ և երկվանկ մի խումբ բառերում եզակի թվի բացառական հոլովի *ից* վերջավորությունից առաջ *ու-*ն դառնում է *վ*, ինչպես՝ առու-առվից (և ոչ՝ առուից), ձու-ձվից (և ոչ՝ ձուից):

բ) Ու հոլովման գոյականների բացառականը կազմվում է հնչյունափոխված կամ անհնչյունափոխ սեռականի հիմքից՝ բացառականի բուն *ց* վերջավորությամբ, ինչպես՝ այգի-այգ(ու)-այգուց, ձի-ձի(ու)-ձիուց, կաղնի-կաղն(ու)-կաղնուց, ուղի-ուղ(ու)-ուղուց, որդի-որդի (ու)-որդուց, (և ոչ՝ այգիից, ձիից, կաղնիից, ուղիից, որդիից):

գ) Ան հոլովման գոյականների բացառականը կազմվում էր ուղղական հոլովի ձևից, ինչպես թռռ-թռռից, ուսում-ուսումից, լեռ-լեռից, ծունկ-ծնկից (և ոչ՝ թռռանից, ուսմանից...): Ան հոլովման պատկանող գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերի բացառականը կազմվում է սեռականից՝ *ից* վերջավորությամբ՝ աշնանից, գարնանից, ամռան/ամառվա-ամառվանից, ձմռան/ձմեռվա-ձմեռվանից (և ոչ՝ ամառից, աշունից):

դ) Վա հոլովման գոյականների բացառականը կազմվում է տրական հոլովից, ինչպես՝ օր-օրվան-օրվանից, շաբաթ-շաբաթվա-շաբաթվանից, առավոտ-առավոտվա-առավոտվանից: Այս ձևերին զուգահեռ կիրառելի են ուղղական հոլովից կազմված ձևերը՝ օրից, շաբաթից, առավոտից: Տարի բառը բացառական հոլովում սովորաբար ունենում է վա հոլովիչով ձևը՝ տարվանից, բայց կարող է գործածվել նաև ու հոլովման ձևով՝ տարուց (և ոչ՝ տարիից):

ե) Ոջ հոլովման գոյականների բացառականը կազմվում է սեռական հոլովից, ինչպես՝ քույր-քրոջ-քրոջից, ընկեր-ընկերոջ-ընկերոջից, տիկին-տիկնոջ-տիկնոջից (և ոչ՝ քույրից, ընկերից, տիկնից):

զ) Ա ներքին հոլովման գոյականների բացառականը կազմվում է ուղղական հոլովի ձևից, ինչպես՝ արյուն-արյունից, անկյուն-անկյունից, անուն-անունից, գիտություն-գիտությունից (և ոչ՝ արյանից, անկյանից, անվանից, գիտությանից):

է) Ո ներքին հոլովման բացառականը կազմվում է սեռականի ձևից, ինչպես՝ եղբայր-եղբոր-եղբորից, հայր-հոր-հորից, հորեղբայր-հորեղբոր-հորեղբորից (և ոչ՝ եղբայրից):

Բացառական հոլովն ուսուցանելուց հետո կազմակերպվում են յուրացման ստուգում և ամրակայող գործնական աշխատանքներ:

1. Բացառական հոլովի բնորոշումը, հարցերը, վերջավորությունները.
2. Բացառական հոլովի տարբեր կիրառությունները.
3. Ընտրովի թելադրությունից դուրս գրել բացառական հոլովով դրված գոյականները.
4. Տրված բայերի հետ գործածել բացառական հոլովով գոյականներ. հեռանալ, փախչել, դժգոհել, պոկվել, ընկնել, դուրս գալ.
5. Շարքերով աշխատանք. կազմել հոլովների հարացույցը.

II. *Գործիական հոլովի* ուսուցման ընթացքում կրկնվում և խորացվում են աշակերտների՝ կրտսեր դպրոցում ստացած գիտելիքները: Աշակերտներին ծանոթ է գործիական հոլովի գլխավոր՝ միջոցի խնդրի իմաստը. գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով ենթական կատարում է գործողությունը ( Փայտը

կտրում են կացնով, սրոցով: Երկաթը կոխում են մուրճով: Հացը կտրում են դանակով): Միջին դարացում գործիական հոլովի հիմնական իմաստներին զուգահեռ ուսուցանվում են նաև գործիական հոլովի մասնավոր դրսևորումները՝ տեղի, ժամանակի, ձևի, միասնության պարագաները:<sup>2</sup> Գործիական հոլովի այս իմաստներն ուսուցանվում են նախադասությունների միջոցով:

...Ոչ ոք չի տուժել զարկից մեր բազկի:

Եթե գերել ենք՝

Լուկ մեր գրքերով.

Եթե տիրել ենք

Լուկ մեր ձիրքերով... (միջոցի անուղղակի խնդիր)

Վճիտ ջուրը կարկաչով ցած էր հոսում թփերի արանքով և կորչում խոտերի մեջ:

Հազրոն գնում էր մշուշով (միջոցի գործիական)

ծածկված ճամփեզրով՝ գլխահակ և տխուր: (տեղի պարագա)

Ժամանակով լինում են չեն լինում, մի քույր ու ախպեր են լինում:

Բազմած լուսնի մուրք շողերին,

Հովի թևին թռչելով՝

Փերիները սարի գլխին

Հավաքվեցին զիշերով: (ժամանակի պարագա)

Պատմիչները մեր վշտահար մեղմ կանթեղի լույսով անշեջ,

Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությանը զիշերն անքուն,

Պատմությունը մեր գրեցին մազադաթի վրա դժգույն: (ձևի պարագա)

Աշակերտները գոյականների գործիական հոլովը հեշտությամբ են գտնում: Նրանք գիտեն, որ գործիական հոլովը հիմնականում կապվում է բայի հետ, ունի -ով վերջավորություն (միայն որոշ գոյականներ ունեն -բ վերջավորություն, ինչպես՝ ցնծությամբ, ուրախությամբ): Աշակերտները դիտարկում են նախադասությունները և գործիական հոլովով դրված գոյականներին ուղղելով համապատասխան հարցը՝ կողմնորոշվում են, թե այդ բառերն ինչ են ցույց տալիս.

ա) *Սափորով, մեզով* բառաձևերը ցույց են տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը:

բ) *Արանքով, ճամփեզրով* բառաձևերը ցույց են տալիս այն տարածությունը, տեղը, որով ընթանում է գործողությունը:

գ) *Ժամանակով, զիշերով* բառաձևերը ցույց են տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է գործողությունը:

դ) *Լույսով, նշխարով, ջրով, ճգնությանը* բառաձևերը ցույց են տալիս գործողության կատարման ձևը:

Այսպես աշակերտները եզրակացնում են, որ գոյականի գործիական հոլովը նախադասության մեջ լինում է բայի լրացում, ցույց է տալիս գործողության կատարման միջոցը, տեղը, ժամանակը, ձևը, այն առարկան, որի միասնությամբ, որի հետ կատարվում է գործողությունը, շարահյուստը լինում է բայական անդամի լրացում՝ անուղղակի խնդիր և պարագա, պատասխանում է ումո՞վ, ինչո՞վ, որտեղո՞վ, ե՞րբ, որքա՞ն ժամանակով, ինչպե՞ս հարցերին և որոշիչ հող չի ստանում:

Աշակերտներին գաղափար է տրվում նաև գործիական հոլովի որոշչային կիրառության մասին:<sup>3</sup> Ուսուցիչը բացատրում է, որ երբեմն էլ գործիական հոլովով դրված բառը լրացնում է գոյականին և դառնում որոշիչ, ինչպես՝ տարիքով մարդ, համով ճաշ, ճտքերով կոշիկ, ուժով մարդ: Գործիական հոլովի որոշչային կիրառությունն ավելի ընկալելի դարձնելու համար զուգադրում են գոյականների գործիական հոլովները և -վոր, -ավոր, -անի, -եղ ածանցներով կազմված մույնիմաստ ածականները.

տարիքով մարդ - տարիքավոր մարդ

ճտքերով կոշիկ-ճտքավոր կոշիկ

համով ճաշ - համեղ ճաշ

<sup>2</sup> Գործիական հոլովի արտահայտած իմաստների մասին մանրամասն տե՛ս Վ.Առաքելյան, *նշվ. աշխ.*, էջ 150-165:

<sup>3</sup> Վ. Զ ո ս յ ա ն, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Եր., 1975, էջ 105-109:

ուժով մարդ –ուժեղ մարդ  
 յոթ գլխով հրեշ – յոթգլխանի հրեշ  
 մեկ ամսով գործուղում–միամսյա գործուղում  
 չորս տեղով բազմոց– չորստեղանի բազմոց  
 լայն թիկունքով մարդ – թիկնեղ մարդ  
 օրենքով գործ – օրինական գործ

Ուսուցիչն աշակերտների բառապաշարը հարստացնում է նաև նման կապակցություններով կազմված դարձվածքներով, ինչպես՝ երեսով մարդ (աներես), աղուհացով մարդ (հյուրասեր), բերանով մարդ (ճարտար լեզվով), հացով տեղ (եկամտաբեր պաշտոն), գլխով մարդ (խելացի) և այլն:

Աշակերտներին գաղափար է տրվում նաև *բ* հոլովակազմիչով գործիականի կազմության ժամանակ կատարվող  $n > n$  հնչյունափոխության մասին: Աշակերտները գիտեն, որ որոշ գոյականներ գործիական հոլովում ունեն *բ* վերջավորություն և կազմվում են սեռական հոլովից, ինչպես՝ (ուղղ.) արյուն-(սեռ.) արյան-(գործ.) արյամբ, ցնծություն-ցնծության-ցնծությամբ: Ուղղական-սեռական-գործիական հոլովածներից ակնհայտ է սեռական հոլովածնի  $n$  վերջնահնչյունի՝ գործիական հոլովում *ժ*-ի հնչյունափոխությունը: Աշակերտներին բացատրվում է, որ *բ* հոլովակազմիչով գործիական հոլովը կազմվում է փոխազդեցական հնչյունափոխության օրինաչափությամբ:<sup>4</sup> Այսպես՝ բառի մեջ  $n$  և  $m$  հնչյունների միմյանց վրա ազդելու պատճառով տեղի է ունեցել փոխազդեցական հնչյունափոխություն՝ արյան + *բ* > արյամբ, ցնծության + *բ* > ցնծությամբ. *բ* հնչյունը, որն արտաբերման տեղով երկշրթնային է, ազդել է իրենից առաջ գտնվող առաջնալեզվային  $n$ -ի վրա և դարձել  $m$ , որը նման է *բ*-ին արտաբերման տեղով:

Գործիական հոլովի ուսուցումն իրականացնելուց հետո ստուգվում է նրա յուրացումն ու կազմակերպվում ամրակայող գործնական աշխատանք:

1. Գործիական հոլովի բնորոշումը, հարցերը, վերջավորությունները.
2. Գործիական հոլովի կիրառությունները.
3. Ցույց տալ գոյականների գործիականը և դրանցով կազմել նախադասություններ.
4. Ընտրովի թեկադրությունից դուրս գրել գործիական հոլովով արտահայտված գոյականները, որոշել նրանց հոլովական իմաստներն ու պաշտոնները.

III. *Ներգոյական հոլովի* ուսուցումը, մյուս հոլովների հետ համեմատած ավելի հեշտ է, որովհետև ներգոյական հոլովի նշանակությունները սահմանափակ են:<sup>5</sup> Ներգոյական հոլովը մյուս հոլովներից սահմանազատվում է ոչ միայն իր իմաստային առանձնահատկություններով, այլև գործածության ծավալով և տարածումով. բազմաթիվ բառեր ներգոյականով չեն հոլովվում: Աշակերտներին կրտսեր դպրոցից ծանոթ է ներգոյականի *ուժ* վերջավորությունն ու տեղի իմաստը: Միջին դպրոցում տեղի իմաստին զուգահեռ աշակերտները ծանոթանում են նաև նրա՝ ժամանակի իմաստին:

Ներգոյական հոլովի տեղի, ժամանակի իմաստները հաղորդվում են նախադասությունների միջոցով:

Մի քարքարոտ <i>հողում</i> ,	Էսպես, ահավոր առյուծի նման,
Ջրի կարոտ <i>հողում</i> ,	Սասմա <i>սարերում</i> նստած էր իշխան:
Հող ու քամու դիմաց	(տեղի իմաստ)

Մի կենտ ժայռ է կանգնած:  
 Յոթերորդ *դարում* Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ պարսից իշխանության և բյուզանդական կայսրության միջև: (ժամանակի իմաստ)

Գիտարկելով նախադասությունները՝ աշակերտները գտնում են ներգոյական հոլովով դրված գոյականները, որոշում կազմությունը, տրվող հարցերը, կիրառությունները և եզրակացնում.

Ներգոյական հոլովը արտահայտում է պարունակելու, իր ներսում մի բան ունենալու իմաստ: Ցույց է տալիս տեղ (հողում, գյուղում, դպրոցում, սարերում) և ժամանակ (օրում, դարում):

<sup>4</sup> Ա.Ս.Մ. ք ի ա ս յ ա ն, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 53-54:

<sup>5</sup> Վ.Ա.Ն. ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 165-167:

Տեղի իմաստ արտահայտող ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը: Ժամանակի իմաստ արտահայտող ներգոյականը ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն:

Ներգոյական հոլովով դրված բառերը նախադասության մեջ լինում են բայի լրացում՝ տեղի կամ ժամանակի պարագաներ: Ներգոյական հոլովը հող չի ստանում: Ներգոյական հոլովի ժամանակի իմաստին անդրադառնալիս ուսուցիչն աշակերտներին բացատրում է, որ ժամանակի իմաստով ներգոյական հոլովով դրվում են հիմնականում ժամանակ արտահայտող բառերը՝ տարի, ամիս, օր, դար, բայե և այլն: Ժամանակ արտահայտող բառերը սովորաբար ներգոյական հոլովում ունենում են թվականով կամ չափ, քանակ ցույց տվող բառերով լրացումներ, և այդ լրացումներով հանդերձ են նրանք ցույց տալիս ժամանակի այն տևողությունը, որի ընթացքում կատարվում է գործողությունը, ինչպես՝ քառասուն տարում, յոթերորդ դարում, հինգ օրում, երեք ժամում: Աշակերտներին գաղափար է տրվում նաև ներգոյական հոլովի գործածության սահմանափակումների մասին: Բացատրվում է, որ կան բազմաթիվ բառեր, որոնք ներգոյականով չեն հոլովվում. դրանցից են՝

ա) անձ ցույց տվող բառերն ու անձնանունները. աշակերտ, ուսուցիչ, Կարինե, Արամ:  
բ) -ում, -ություն, -ելեն, -ունդ ածանցներով կազմված բառերի մեծ մասը, ինչպես՝ շարժում, զեկուցում, ուրախություն, տխրություն, բանջարեղեն, կոշկեղեն, սնունդ և այլն,  
գ) ժամանակ արտահայտող մի շարք բառեր, ինչպես՝ զարում, ամառ, մայիս, հունիս, եղանակ, առավոտ, երեկո և այլն:

Այս բառերը պարունակելու իմաստն արտահայտում են սեռական հոլովաձևով և մեջ կապով, ինչպես՝ շարժման մեջ, ուրախության մեջ, զեկուցման մեջ և այլն:

Ներգոյական հոլովի կազմությունը և իմաստը ուսուցանելուց հետո հարցազրույցի ձևով ամրակայվում է յուրացումը.

1. Ի՞նչ վերջավորություն ունի ներգոյական հոլովը, ինչպե՞ս է կազմվում:
2. Ի՞նչ է արտահայտում ներգոյական հոլովը:
3. Ի՞նչ հարցերի է պատասխանում:
4. Ո՞ր գոյականները չունեն ներգոյական հոլով:
5. Ներգոյական հոլովը հող ստանո՞ւմ է, թե՞ ոչ:

Կազմակերպվում է ամրակայող գործնական աշխատանք:

ա) Տրված բառերը նախադասությունների մեջ կիրառել ներգոյական հոլովին հատուկ պաշտոններով: բ) Ընտրովի թելադրությունից առանձնացնել ներգոյական հոլովով դրված գոյականները:

Այսպիսով, ուսուցման գործընթացը իրականացվում է որոշակի փուլերով՝ հոլովի ձևի ուսուցում, հոլովի իմաստի ուսուցում, հոլովի շարահյուսական գործառնային ուսուցում: Միջին դպրոցում նշված հոլովների ուսուցման խնդիրները իրագործվում են մեթոդամանկավարժական մի շարք սկզբունքներով, որոնցից կարևորվում են ինտերակտիվ մեթոդն ու նրա եղանակները՝ վերլուծություն, համեմատություն, համադրություն, հակադրություն և այլն:

## ОБУЧЕНИЕ В СРЕДНЕЙ ШКОЛЕ ОТЛОЖИТЕЛЬНОГО, ТВОРИТЕЛЬНОГО И МЕСТНОГО ПАДЕЖЕЙ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Р. Арутюнян \_\_\_

В статье обсуждаются вопросы изучения в средней школе отложительного, творительного и местного падежей. Процесс обучения осуществляется определенными этапами: обучение семантики падежа, синтаксиса и синтаксических функций.

Вопросы обучения указанных падежей осуществляются рядом методических принципов, из-коих важнейшими являются интерактивный метод и его способы: анализ, сравнение, сопоставление, противопоставление и т.д..